ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Մանվել Խաչատրյան, «Երևանի մնջախաղի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն:

2. Գործուղման վայրը՝ Մակեդոնիա, Բիտոլա քաղաք, ժամկետները՝ 26.04.2026 – 02.05.2026թ.

3. Հրավիրող կողմը՝ «*27th International Monodrama Festival 2026*» միջազգային հեղինակավոր մոնո ներկայացումների փառատոն:

4. Գործուղման նպատակը՝ «Երևանի մնջախաղի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի մասնակցությունը «*27th International Monodrama Festival 2026*» փառատոնին «Դեպի ներս» ներկայացումով, փորձի փոխանակում այլ մասնակիցների հետ, վարպետաց դաս փառատոնի մասնակիցների հետ:

5. Քննարկված թեմաները՝ քննարկվել է հետագա համագործակցությունը փառատոնի այլ մասնակիցների հետ, նաև քննարկվել է հետագայում թատրոնի մասնակցությունը փառատոնին ուրիշ ներկայացումներով:

6. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր՝ «Երևանի մնջախաղի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի դերասանուհի Նաիրա Եդիգարյանը հանդես է եկել «Դեպի ներս» ներկայացումով և անցկացրել է վարպետաց դաս փառատոնի բոլոր մասնակիցների հետ:

7. Հավաքի ժամանակ ընդունված որոշումներ, պայմանավորվածություններ՝ ձեռք է բերվել բանավոր պայմանավորվածություն 2027 թվականին մասնակցելու «*International Monodrama Festival*» փառատոնին ուրիշ ներկայացումով և բանավոր պայմանավորվածություն հայ-մակեդոնական համատեղ ներկայացում բեմադրելու մասին:

8. Առաջարկություններ, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ առաջարկվել է բեմադրել հայ-մակեդոնական համատեղ ներկայացում 2027 թվականին, որի պատասխանատուն կլինի «Երևանի մնջախաղի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Մանվել Խաչատրյանը, ակնկալվող արդյունքները՝ ներկայացումը կխաղացվի ինչպես Հայաստանում, այնպես էլ Մակեդոնիայում, կմասնակցի եվրոպական տարբեր փառատոնների, ինչը կնպաստի թատրոնի և հայկական մշակույթի ճանաչելիության բարձրացմանը:

Տնօրեն Մ. Խաչատրյան «06» մայիս 2026թ.